ՀՀ Կենտրոնական բանկ նախագահի
Որոշում N 1/174Ա

15/04/2022

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն 2022 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ծավալով՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022 թվականի ապրիլի 15-ի թիվ 16 արձանագրություն)՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ծավալով՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ